

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-ԻՆ  
ԺԱՍՆ 16:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ` ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ  
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴԻՄՈՒՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

---

**քաղ. Երևան**

**Մասնակցում էին`**

Ա. Գևորգյան	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Ս. Կարապետյան	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Ա. Հարությունյան	ՀՀ բնապահպանության նախարար
Ե. Զախարյան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
Վ. Մովսիսյան	ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն
Ա. Քոչարյան	ՀՀ Լոռու մարզպետ
Ս. Խաչատրյան	ՀՀ Սյունիքի մարզպետ
Ա. Ղուլարյան	ՀՀ Տավուշի մարզպետ
Ս. Բագրատյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետ
Կ. Շահգալղյան	ՀՀ Կոտայքի մարզպետ
Ն. Պողոսյան	ՀՀ Գեղարքունիքի մարզպետ
Ռ. Ալավերդյան	ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ
Ս. Գալստյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Կ. Արեյան	Երևանի քաղաքապետի տեղակալ
Մ. Առաքելյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Կ. Մարգարյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության պետ
Ա. Մարգարյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության գլխավոր մասնագետ

Մ. Մաթևոսյան	«Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրեն
Հ. Սանասարյան	Կանաչների միության նախագահ
Կ. Դանիելյան	Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիայի նախագահ

1. ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենի 2010 թվականի հաշվետվությունը՝ հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության մասին

-----  
(Վ. Մովսիսյան, Տ. Սարգսյան)

**Օրակարգի 1-ին հարցը զեկուցեց ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Վ. Մովսիսյանը** և նշեց, որ ՀՀ անտառների վերականգնման և զարգացման (ԱՎԶ) հիմնադրամի գործադիր տնօրինությունը ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ ԱՎԶ հիմնադրամի կանոնադրությամբ, ՀՀ ԱՎԶ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշումներով 2010 թվականին ՀՀ գյուղատնտեսության նախարարության, «ՀՀ ԳԱԱ-ի Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի և ՀՀ Շիրակի մարզպետարանի աջակցությամբ որոշակի աշխատանք է կատարել անտառների վերականգնման և զարգացման ծրագրերի մշակման և դրանց իրականացման ուղղությամբ: ՀՀ ԱՎԶ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատվել էին հետևյալ ծրագրերը՝

1) «Օիժեռնակաբերդ» հուշահամալիրի կանաչ գոտու վերականգնման» (3-րդ փուլ) ծրագրի շրջանակներում 20 հա վրա ոռոգման ցանցի կառուցման աշխատանքների իրականացումը՝ 28,7 մլն դրամ արժեքով: Տվյալ շինարարական աշխատանքներն ամբողջությամբ ավարտված են և 2010 թվականի հունիսի 8-ին սահմանված կարգով (աշխատանքների հանձնման-ընդունման եռակողմ ակտով) հանձնվել են «ՀՀ ԳԱԱ-ի Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ին՝ շահագործման: Այսպիսով, «Օիժեռնակաբերդ» հուշահամալիրի կանաչ գոտու վերականգնման» ծրագրի (3-րդ փուլ) շրջանակներում 20 հա անտառատարածքի ոռոգման ցանցի կառուցման նախագծային և շինարարական աշխատանքների իրականացման համար հատկացված 28700,0 հազ. դրամ պետական դրամաշնորհի շրջանակներում ծախսվել է 28606,0 հազ. դրամ, որից՝ 2100,0 հազ. դրամը նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության անցկացման աշխատանքների ֆինանսավորման համար, իսկ 26506,0 հազ.

դրամը՝ ոռոգման ցանցի կառուցման շինարարական աշխատանքների ֆինանսավորման համար: Առաջացած 94,0 հազ. դրամի տնտեսումն ուղղվելու է ՀՀ ԱՎԶ հիմնադրամի 2011 թվականի ծրագրերի ֆինանսավորմանը.

2) «ՀՀ Շիրակի մարզի Արթիկ քաղաքի շրջակայքում անտառվերականգնման» համալիր ծրագրի շրջանակներում 25 հեկտար տարածքի վրա իրականացվել են անտառապատման և ցանկապատման աշխատանքներ՝ 22,8 մլն դրամ արժեքով: Համաձայն նախագծանախահաշվային փաստաթղթերի Արթիկի անտառապետության 25 հեկտար տարածքի անտառապատման և ցանկապատման աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում էր 22289,3 հազ. դրամ:

Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ անտառվերականգնման աշխատանքները կատարվել էին 2010 թվականի ուշ գարնանը և բնակլիմայական անբարենպաստ պայմանների ու ագրոտեխնիկական միջոցառումների ոչ բավարար իրականացման պատճառով տնկիների կայքողականությունը չէր բավարարում կնքված պայմանագրի պահանջներին (60 տոկոս կայքողականություն), ուստի տվյալ տարածքում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից և նրա միջոցներով աշնանը կատարվել է կրկնակի ծառատնկում, որի կայքողականությունը պարզ կդառնա 2011 թվականի գարնանը: Այդ իսկ պատճառով 2010 թվականի ապրիլի 1-ի N ԱՇԶԲ-04/10 պայմանագրում կատարվել են համապատասխան փոփոխություններ, որով պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 2011 թվականի հունիսի 1-ը: ՀՀ Շիրակի մարզի Արթիկ քաղաքի շրջակայքում 25 հեկտար տարածքում կատարված աշխատանքների վերջնական ընդունում-հանձնումը տեղի կունենա 2011 թվականի հունիս ամսին: 2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից կատարվել են 17812,2 հազ. դրամի անտառապատման և ցանկապատման աշխատանքներ, որոնց համար վճարումը կատարվել է ամբողջությամբ: Պայմանագրով նախատեսված՝ մնացած 4238,1 հազ. դրամը կփոխանցվի «Հայանտառ» ՊՈԱԿ-ին 2011 թվականի ընթացքում՝ տնկիների ոչ պակաս 60 տոկոս կայքողականությունն ապահովելու և համապատասխան կատարողական ակտ ներկայացնելու դեպքում: Այսպիսով, ծրագիրը համարվում է իրականացված:

Այնուհետև նա նշեց, որ ՀՀ ԱՎԶ հիմնադրամի գործադիր տնօրինությունը 2010 թվականին կատարել է որոշ աշխատանք՝ այլ կազմակերպություններից անտառների վերականգնման և զարգացման համար բարեգործական նվիրատվություններ ստանալու ուղղությամբ: Արդյունքում ստացած բարեգործական նվիրատվությունների ընդհանուր գումարը կազմել է 8400,0 հազ. դրամ:

Ընդհանուր առմամբ, ՀՀ ԱՎԶ հիմնադրամը 2004-2010 թվականների ընթացքում կատարել է անտառվերականգնման աշխատանքներ՝ 245 հեկտարի վրա, որից՝ նոր տնկարկների հիմնումը կազմել է 178 հեկտար: Կառուցվել և շահագործման են հանձնվել 39588 մետր երկարությամբ ջրագծեր, 13749 մետր երկարությամբ մետաղալար ցանկապատ, 2 պոմպակայան, 2 տրասֆորմատորային ենթակայան և 1,3 կմ էլեկտրահաղորդման գիծ: Այսպիսով, 2004-2010 թվականներին ստացվել են 649,2 մլն դրամ ֆինանսական միջոցներ, որից՝ պետական մուտքերը՝ 568,0 մլն դրամ, այլ բարեգործական նվիրատվությունները՝ 81,2 մլն դրամ:

Ինչ վերաբերում է ՀՀ ԱՎԶ հիմնադրամի գործադիր մարմնի ապարատի պահպանման (վարչակառավարչական) 2010 թվականի ծախսերին, ապա փաստացի (դրամարկղային) ծախսը կազմել են 15409,8 հազ. դրամ, իսկ փաստացի տնտեսումը՝ 880,5 հազ. դրամ: Այսպիսով, 2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ մնացորդը կազմում է 24.5 մլն դրամ:

**Քննարկումներից հետո որոշվեց՝** հաստատել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենի 2010 թվականի հաշվետվությունը՝ հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության մասին:

2. ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2010 թվականի ֆինանսական հաշվետվության մասին

-----  
(Վ. Մովսիսյան, Տ. Մարգարյան)

**Օրակարգի 2-րդ հարցը զեկուցեց ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Վ. Մովսիսյանը** և նշեց, որ ՀՀ ԱՎԶ հիմնադրամը 2010 թվականին՝

1) ՀՀ գյուղատնտեսության նախարարությունից ստացել է 66874,4 հազ. դրամի դրամաշնորհ՝ ՀՀ ԱՎԶ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված 2010 թվականի ծրագրերի ֆինանսավորման և գործադիր մարմնի ապարատի պահպանման (վարչակառավարչական) ծախսերը ֆինանսավորելու համար:

2) ՀՀ բնապահպանության նախարարությունից ստացել է 6341,6 հազ. դրամի դրամաշնորհ՝ ՀՀ ԱՎԶ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված 2010 թվականի և այլ գալիք ժամանակաշրջանի ծրագրերի ֆինանսավորման համար:

3) որպես նվիրատվություն ստացել է 8400,0 հազ. դրամ:

Այսպիսով, ՀՀ ԱՎԶ հիմնադրամի 2010 թվականի բյուջեի դրամական միջոցներով մուտքային մասը կազմել է ընդամենը 87499,6 հազ. դրամ: 2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՎԶ հիմնադրամն ունեցել է դրամական միջոցների մնացորդ՝ 5634,3 հազ. դրամի չափով:

ՀՀ ԱՎԶ հիմնադրամի դրամական միջոցների ծախսային մասը կազմել է՝ 62519,3 հազ. դրամ, իսկ դրամական միջոցների մնացորդը՝ 24980,3 հազ. դրամ:

Այնուհետև, նա նշեց, որ ՀՀ ԱՎԶ հիմնադրամի 2010 թվականի ֆինանսական գործունեությունը ենթարկվել է աուդիտի, որի վերաբերյալ դրական եզրակացությունը սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարություն:

**Քննարկումներից հետո որոշվեց՝** հաստատել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2010 թվականի ֆինանսական հաշվետվությունը:

3. ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2011 թվականի հաստիքացուցակի և գործադիր մարմնի պահպանման (վարչակառավարչական) ապարատի ծախսերի նախահաշվի մասին

-----  
(Վ. Մովսիսյան, Տ. Մարգարյան)

**Օրակարգի 3-րդ հարցը զեկուցեց ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Վ. Մովսիսյանը:**

**Քննարկումներից հետո որոշվեց՝** հաստատել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2011 թվականի հաստիքացուցակը և գործադիր մարմնի պահպանման (վարչակառավարչական) ապարատի ծախսերի նախահաշիվը՝ 17846,5 հազ. դրամ գումարով:

4. ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2011 թվականին իրականացվելիք ծրագրերի և ֆինանսավորման աղբյուրների մասին

-----  
(Վ. Մովսիսյան, Տ. Մարգարյան)

**Օրակարգի 4-րդ հարցը զեկուցեց ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Վ. Մովսիսյանը** և նշեց, որ 2011 թվականին նախատեսվում է 2 փուլով անտառապատել էրեբունու անտառպետության 51 հա տարածքը: Ծրագիրն

իրականացնելու համար նախատեսվում է ոռոգման ջուրը վերցնել Ազատի 3-րդ աստիճանի պոմպակայանի ջրընդունիչ ավազանից: Անտառտնկման ենթակա տարածքը գտնվում է Երևան քաղաքի հարավ-արևելյան հատվածում և զբաղեցնում է Երևանի ՋԷԿ-ի դիմաց գտնվող բլրալանջերը: Արդյունքում նախատեսվում է անտառապատել Էրեբունու անտառապետության ՋԷԿ-ի հարակից 51 հա տարածքը, որն էլ իր հերթին կնպաստի շրջակա տարածքի բնության պահպանմանը, քանի որ այս տարածքը չի ոռոգվում և դառնում է անապատային գոտի: Անտառապատվող 51 հա տարածքի վրա անտառտնկարկների ոռոգման համար կպահանջվի 40 լ/վ ջուր: Ծրագրի առաջին փուլով նախատեսվում է հիմնել 20 հա անտառտարածք՝ իր ցանկապատով, իսկ մնացած 31 հա տարածքը կանտառապատվի երկրորդ փուլով՝ 2012 թվականին: Առաջին փուլով 20 հա տարածքի անտառապատման համար կպահանջվի շուրջ 19.0 մլն (ներառյալ՝ ԱԱՀ-ն) դրամ, իսկ անտառապատվող 20 հա տարածքի ոռոգման համակարգի ստեղծման և ցանկապատման համար՝ 59.0 մլն (ներառյալ՝ ԱԱՀ-ն) դրամ:

#### **Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հաստատել «Երևանի անտառտնտեսության «Էրեբունու անտառապետության» 51 հա տարածքի անտառապատման աշխատանքների՝ ծրագրի շրջանակներում՝

ա. ոռոգման համակարգի ստեղծման և ցանկապատման աշխատանքների իրականացման ծրագիրը՝ 59.0 մլն դրամ արժեքով,

բ. 20 հեկտարի վրա անտառապատման աշխատանքների իրականացման ծրագիրը՝ 19.0 մլն դրամ արժեքով.

2) հաշվի առնելով աշխատանքների շարունակականությունն ու հրատապությունը՝ թույլատրել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Վ. Մովսիսյանին՝

ա. «Երևանի անտառտնտեսության՝ «Էրեբունու անտառապետության» 51 հա տարածքի անտառապատման աշխատանքների՝ ծրագրի շրջանակներում ոռոգման համակարգի ստեղծման և ցանկապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման, ինչպես նաև ոռոգման համակարգի ստեղծման և ցանկապատման աշխատանքների իրականացման կապալառու կազմակերպություններին ընտրել բանակցությունների միջոցով,

բ. «Երևանի անտառտնտեսության՝ «Էրեբունու անտառապետության» 51 հա տարածքի անտառապատման աշխատանքների՝ ծրագրի շրջանակներում 20 հեկտարի վրա անտառապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման, ինչպես նաև 20 հեկտարի վրա անտառապատման

աշխատանքների իրականացման կապալառու կազմակերպություններին ընտրել բանակցությունների միջոցով.

3) ՀՀ գյուղատնտեսության նախարար Ս. Կարապետյանին, ՀՀ ֆինանսների նախարար Վ. Գաբրիելյանին և ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Վ. Մովսիսյանին՝ 15-օրյա ժամկետում համատեղ քննարկել և ներկայացնել առաջարկություն՝ սույն արձանագրության 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված աշխատանքների ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ